ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

<<14>> նոյեմբերի 2014 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ **Գյումրի համայնքի ղեկավար Ս.Մ.Բալասանյանը**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝ **Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը**

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ **Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝**

Ա. Ադամյան Գ. Ադամյան Ա. Բաղեյան Ա. Բաղրամյան Լ.Բարսեղյան Մ.Գաբոյան Ա.Գրիգորյան Վ.Եդիգարյան Գ.Թաթարյան Հ. Խաչատրյան Հ. Կարապետյան Տ.Հովհաննիսյան Վ. Հունանյան Ն. Մեսրոպյան Ռ.Մխիթարյան Է.Մկրտչյան Վ.Շիրինյան Մ. Սահակյան Տ. Փանոսյան

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝ Համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Ռ.Սանոյանը և Վ. Մխիթարյանը, համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Ա.Բալաբեկյանը, Վ.Սուքիասյանը, Ա.Մովսեսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանը, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կ.Մանասյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ Ա.Հակոբյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանը, ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի պետ Ս.Ղազարյանը, կրթության բաժնի պետ Հ.Սուլթանյանը, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանը, համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետ Ա.Դավթյանը, վերահսկողության բաժնի պետ Ա.Համբարձումյանը, բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս.Մինասյանը, գովազդի բաժնի պետ Հ.Թադևոսյանը, իրավաբանական ապահովման բաժնի պետի ժ/պ Ա.Գրիգորյանը, քարտուղարության բաժնի պետ Ն.Բարսեղյանը, ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի պետ Ա. Հովհաննիսյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝

ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է)

ԼՍԵՑԻՆ.

1. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

Համայնքի ղեկավար Ս.Բալասանյանը ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 161-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2013թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 161-Ն որոշմամբ հաստատված բյուջեի վարչական մասի .

   1)եկամուտները նվազեցնել 2.6311.100(քսանվեց միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամով,

   2)ծախսերը նվազեցնել 2.6311.100(քսանվեց միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամով:
2. Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ հատվածներում կատարել փոփոխություններ՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար NN1-4 հավելվածների:
3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին կատարել համապատասխան փոփոխությունները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 170-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ա որոշման 1-ին կետով հաստատված Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՊԻՈՆԵՐ ՊԱԼԱՏ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին <<Պիոներ պալատ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռից դուրս գրել ԿԱՎԶ-3270 մակնիշի ավտոբուսը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ԳՅՈՒՄՐԻ – ԵՐԵՎԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՀՈՌՈՄ ԳՅՈՒՂԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՎԻՐԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի – Երևան ավտոճանապարհի Հոռոմ գյուղի խաչմերուկում նոյեմբերի տասին տեղի ունեցած ողբերգական պատահարի վիրավորների և զոհվածների ընտանիքներին տրամադրել 2 200 000(երկու միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՎԱՌԵԼԱՓԱՅՏ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:
Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սոցիալապես անապահով ընտանիքներին վառելափայտ ձեռք բերելու նպատակով տրամադրել 2 000 000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ :
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին ՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՀԵ ԱՂԱՍՈՒ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:
Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Վահե Աղասու Մարգարյանին տրամադրել 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել 11 000 000 (տասնմեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ Գյումրի համայնքի մանկապարտեզների, սոցիալապես անապահով երեխաներին նվեր փաթեթների տրամադրման, պարգևների, քաղաքի գլխավոր եղևնու տեղադրման,ամանորյա միջոցառումների անցկացման և հրավառության կազմակերպման համար:
2. Թույլատրել սույն որոշման 1-ին կետում նշված անհետաձգելի համարվող գնումները իրականացնել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) <<Այլ ծախսեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 148 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՈՒԹ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 148 (մեկ հարյուր քառասունութ) անձանց կանխիկ տրամադրել 1 725 000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. <<ՀԱՅԱՍՏԱՆ>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.<<Հայաստան>> համահայկական հիմնադրամին հատկացնել 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետեպնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից, այն փոխանցելով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ SWIFT: CBRAAM 22, 103003215672 (հայկական դրամ) հաշվեհամարին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՏԱՐԵՄՈՒՏԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել դրամական օգնություն սոցիալապես ծանր պայմաններում ապրող ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1) Արցախյան պատերազմում (1991-1994 թվականներ) զոհված՝ թվով 105 (մեկ հարյուր հինգ) ազատամարտիկների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2100 000 (երկու միլիոն մեկ հարյուր հազար)՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Զոհված (մահացած)՝ թվով 159 (մեկ հարյուր հիսունինը) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 3 180 000 (երեք միլիոն հարյուր ութսուն հազար)՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ՝ թվով 19 (տասնինը) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 285 000 (երկու հարյուր ութսունհինգ հազար)՝ համաձայն N 3 հավելվածի,

4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ թվով 239 (երկու հարյուր երեսունինը) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2390 000 (երկու միլիոն երեսունինը հազար)՝ համաձայն N 4 հավելվածի,

5) Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից՝ թվով 68 (վաթսունունութ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 1 020 000 (մեկ միլիոն քսան հազար)՝ համաձայն N 5 հավելվածի,

6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից՝ թվով 37 (երեսունյոթ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 555 000 (հինգ հարյուր հիսունհինգ հազար)՝ համաձայն N 6 հավելվածի:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ԳՐՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆԻ <<ԳՅՈՒՄՐԻ>>ԳՐՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 0
դեմ – 17
ձեռնպահ – 2 (Լ.Բարսեղյան, Ա. Բաղեյան)

Որոշումը չընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. «Մարզամշակութային Կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որպես վարձավճար հատկացնել 3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից Յուրի Վարդանյանի անվան ծանրամարտի դպրոցի զբաղեցրած տարածքի մասով՝ 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) և Հովհաննես Հովհաննիսյանի անվան գրադարանի զբաղեցրած տարածքի մասով՝ 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4216) <<Գույքի վարձակալություն>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) և 8/2/1 գործառական դասակարգման (4216) <<Գույքի վարձակալություն>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից 2014 թվականի հունիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների.

1)Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 413,58 (չորս հարյուր տասներեք ամբողջ հիսունութ հարյուրերորդական) հեկտար, որից վարելահող՝ 88,43(ութսունութ ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) հեկտար, արոտ՝ 323,87 (երեք հարյուր քսաներեք ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) հեկտար,

2) Բնակավայրի հողեր 2712,15(երկու հազար յոթ հարյուր տասներկու ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) հեկտար, որից տնամերձ՝ 366,34 (երեք հարյուր վաթսունվեց ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) հեկտար, հասարակական՝128,72 (հարյուր քսանութ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) հեկտար, խառը կառուցապատման՝ 15,66 (տասնհինգ ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) հեկտար, ընդհանուր օգտագործման՝ 377,03(երեք հարյուր յոթանասույոթ ամբողջ երեք հարյուրերորդական) հեկտար, այլ հողեր՝ 1053,47(հազար հիսուներեք ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) հեկտար,

3) Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր 366,39(երեք հարյուր վաթսունվեց ամբողջ երեսունինը հարյուրերորդական) հեկտար,

4) Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր 423,02(չորս հարյուր քսաներեք ամբողջ երկու հարյուրերորդական) հեկտար,

5) Հատուկ պահպանվող տարածքների հողեր 94,11 (ինսունչորս ամբողջ տասնմեկ հարյուրերորդական) հեկտար,

6) Հատուկ նշանակության հողեր 256,69(երկու հարյուր հիսունվեց ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) հեկտար,

7) Անտառային հողեր 150,84 (հարյուր հիսուն ամբողջ ութանասունչորս հարյուրերորդական) հեկտար,

8) Ջրային հողեր 12,72(տասներկու ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) հեկտար,

9) Քաղաքացիների սեփականության հողեր 405,72 (չորս հարյուր հինգ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) հեկտար,

10) Իրավաբանական անձանց հողեր 68,79 (վաթսունութ ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) հեկտար,

11) Համայնքային սեփականության հողեր 3257,31(երեք հազար երկու հարյուր հիսունյոթ ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) հեկտար,

12) Պետական սեփականության հողեր 687,52(վեց հարյուր ութսունյոթ ամբողջ հիսուներկու հարյուրերորդական) հեկտար,

13) Վարչատարածք՝ 4429,50 (չորս հազար չորս հարյուր քսանինն ամբողջ հինգ տասներորդական) հեկտար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել՝ Գյումրի քաղաքի վարչական տարածքի գոտիավորման նախագծի մշակման աշխատանքների քաղաքաշինական առաջադրանքը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 120-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի «Գյումրու համայնքային սեփականություն համարվող Երևանյան խճուղի N 30ա հասցեի նախակրթարանի շենքի երկու մասնաշենքերը «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության օգտագործումից հետ վերցնելու և դրանք անհատույց օգտագործման իրավունքով ամերիկյան «Փարոս» հիմնադրամի «Դեպի առաջ» հասարակական կազմակերպությանը տրամադրելու մասին» N 120-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) վերնագրում «երկու մասնաշենքերը» բառերը փոխարինել «մեկ մասնաշենքը» բառերով և «դրանք» բառը փոխարինել «այն» բառով,
   2) որոշման 1-ին կետի 3-րդ տողի «երկու մասնաշենքերը» բառերը փոխարինել «մեկ մասնաշենքը» բառերով և 4-րդ տողի «մասնաշենքը» բառը փոխարինել «երկու մասնաշենքերը» բառերով,
   3) որոշման 2-րդ կետի 1-ին տողի «երկու մասնաշենքերը» բառերը փոխարինել «մեկ մասնաշենքը» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 58-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրաբերելու մասին» N 58-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետի 1-ին տողի «ախտաբանաանատոմիական» բառը փոխարինել «պատոլոգոանատոմիական» բառով,
2) 2-րդ կետից հանել «հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. <<ՕՅՈՒՆՋՅԱՆ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՐՀԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Միեր Մկրտչյան փողոց N 47/4 հասցեում գտնվող, Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող 0,1125 (զրո ամբողջ հազար հարյուր քսանհինգ տասհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը 50 (հիսուն) տարի ժամկետով անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել <<Օյունջյան>> բարեգործական հիմնադրամին՝ արհեստի կենտրոն կառուցելու նպատակով:
2. Արհեստի կենտրոնի նախագծման և կառուցման աշխատանքներն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերն աճուրդային կարգով օտարելու նպատակով սահմանված մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ № 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՇԵՆՔԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Թումանյան փողոցի № 15 հասցեի 1070,95 (հազար յոթանասուն ամբողջ իններորդական) քառակուսի մետր մակերեսով կառույցը և դրա կառուցապատման և սպասարկման համար զբաղեցրած 0,222232 (զրո ամբողջ երկու հարյուր քսաներկու հազար երկու հարյուր երեսուներկու միլիոներորդական) հեկտար մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով՝ 30 (երեսուն) տարի ժամկետով, տրամադրել Գյումրի քաղաքի զինվորական կոմիսարիատին:
2. Օրենքով սահմանված կարգով կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել պատմաճարտարապետական հուշարձան-կառույցի պահպանության պարտավորագիրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0

ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող շենք-շինությունները 30 (երեսուն) տարի ժամկետով անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ համաձայն հավելվածի:
2. Օրենքով սահմանված կարգով կնքել գույքի անհատույց (մշտական) օգտագործման պայմանագիր (պատասխանատու՝ քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների հաշվին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ N 1/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Փոփոխել քաղաքացիներ Ռուբիկ և Ձյունիկ Գասպարյաններին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07102013-08-0012) Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց N 1/6 հասցեում գտնվող 0,12

(զրո ամբողջ տասներկու հարյուրերորդական) հեկտար մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրության հողերի արդյունաբերական օբյեկտների հողը փոխադրել բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողի կատեգորիա:

2. Սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային և գործառական նշանակության փոփոխման մասին 10(տաս)-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 6/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N 6/3 հասցեում գտնվող, Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 18092014-08-0038) անշարժ գույքն ու 1,69701 (մեկ ամբողջ վաթսունինը հազար յոթ հարյուր մեկ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը համաքաղաքային հանգստի գոտի կազմակերպելու համար մրցութային կարգով տրամադրել վարձակալության:

2. Տարեկան վարձավճարի մեկնարկային չափ սահմանել 1140000 (մեկ միլիոն հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

24.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N 102-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 30-ի «Աճուրդով օտարելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող առանձնացված հողամասերի աճուրդի մեկնարկային գներ և պայմաններ հաստատելու մասին» N 102-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) նախաբանի 3-րդ մասի «կետերով» բառը փոխարինել «մասերով» բառով,
2) որոշման հավելվածի 4-րդ տողի 6-րդ սյունակի «2 000 000» թիվը փոխարինել «1 700 000» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

25.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 23-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետությանը գույք նվիրաբերելու մասին» N 23-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 2-րդ կետի 3-րդ և 4-րդ տողերում «օրենքով սահմանված կարգով տրամադրել անհատույց (մշտական) օգտագործման» բառերը փոխարինել «նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

26. ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 84-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի հուլիսի 3-ի «Մնջոյան փողոց N 11/6 հասցեագրությամբ առանձնացված շինության մասին» N 84-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 3-րդ կետի «4 170 000 (չորս միլիոն մեկ հարյուր յոթանասուն հազար)» թիվը և բառերը փոխարինել «2 736 000 (երկու միլիոն յոթ հարյուր երեսունվեց հազար)» թվով և բառերով, «1 930 000 (մեկ միլիոն ինը հարյուր երեսուն հազար)» թիվը և բառերը փոխարինել «1 264 000 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսունչորս հազար)» թվով և բառերով

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՊԵՏԱՑ ՓՈՂՈՑ № 101 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ 95,9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՆԿՈՒՂԸ <<ԿՈՄՊԱՍՍ>> ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ,ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Վարպետաց փողոց № 101 հասցեում գտնվող Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանի 95,9 (իննսունհինգ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով՝ 1 (մեկ) տարի ժամկետով, տրամադրել <<Կոմպասս>> գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն հասարակական կազմակերպությանը:
2. Օրենքով սահմանված կարգով կնքել գույքի անհատույց (մշտական) օգտագործման պայմանագիր:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել պատմաճարտարապետական հուշարձան-կառույցի պահպանության պարտավորագիրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԹՎՈՎ 22 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի կրթության բաժնի պետ Հ.Սուլթանյանին:

Հ.Սուլթանյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային ենթակայության «Լապտերիկ», «Ծիածան», «Թոռնիկ Մանուշակ», «Ժպիտ», «Լուսաստղիկ», «Արձագանք», «Լիլիթ», «Նանուլիկ», «Լիանա», «Արևիկ», «Գոհար», «Փարոս», «Անի պարտեզ», «Կարմիր գլխարկ», «Հենզել և Գրետել», «Գյումրու մանկիկ», «Էյլիթիա», «Ձյունիկ», «Հուսո առագաստ», «Երազանք», «Անուլիկ», «Զանգակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-22 հավելվածների:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տարածքային բաժին օրենքով սահմանված կարգով պետական գրանցում կատարելու խնդրանքով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

30. 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԵԴԱԼՆԵՐ ՆՎԱՃԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանին:

Մ.Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Մեդալների արժանացած գյումրեցի մարզիկներին և նրանց մարզիչներին տրամադրել դրամական օգնություն 2.000.000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) <<Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից, օրենքով սահմանված կարգով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանին:

Մ.Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- ավագանու անդամ Գագիկ Ադամյան.-«Առաջարկում եմ նշված գումարը ավելացնել և դարձնել 1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Առաջարկությունն ընդունվեց

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ենթակայության մարզադպրոցներին՝ շինվերանորոգման աշխատանքները ավարտելու, մարզական գույք ձեռք բերելու նպատակով հատկացնել 1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

32. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻՑ, ՄԻՆՉԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՝ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Կ.ՄԱՆԱՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կ.Մանասյանին:

Կ.Մանասյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել իրականացնելու թվով 1(մեկ) աղբատար ավտոմեքենայի անհետաձգելի համարվող գնումը բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

2.Թույլատրել գնումը իրականացնել երկրորդական շուկայից**:**

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՄԻՍԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 121-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Ա.Մկրտչյանին:

Ա.Մկրտչյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել իրականացնելու թվով 1(մեկ) աղբատար ավտոմեքենայի անհետաձգելի համարվող գնումը բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
2.Թույլատրել գնումը իրականացնել երկրորդական շուկայից**:**
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՇՐՋԱՆԻ ԴՈՄՈԴԵԴՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի պետ Ա.Հովհաննիսյանին:
Ա.Հովհաննիսյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Վավերացնել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի և Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի շրջանի Դոմոդեդովո համայնքների միջև 2014 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված համագործակցության զարգացման մասին հուշագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐ՝ ԼԵՎՈՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ, Կ.ՄԱՆԱՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրի համայնքի ավագանու անդամ Լ. Բարսեղյանին:
Լ.Բարսեղյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի և կապի, Արտակարգ իրավիճակների նախարարներին և Ոստիկանության պետին ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց